Հարություն

Կարդացեք Ալմա 40.2–5, 23–24 հատվածները և գտեք, թե ինչ էր ուսուցանել Ալման Կորիանթոնին: Ապա օգտագործեք հետևյալ նյութերը, որոնք կօգնեն ձեզ պատրաստվել ուսուցմանը:

Ալմա 11.42–45

Սուրբ գրքերի ուղեցույց, «Հարություն», scriptures.ChurchofJesusChrist.org

Առաջին Նախագահությունից նախագահ Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է.

Զատիկի այս օրերին մենք տոնում ենք Հարության իրողությունը: Այն մեզ ուժ և հեռանկար է տալիս դիմակայելու մահկանացու կյանքի մարտահրավերներին, որոնց բախվում ենք մենք և մեր հարազատները, օրինակ՝ ֆիզիկական, մտավոր և էմոցիոնալ տկարություններին, որ մեզ հետ են ի ծնե կամ ձեռք ենք բերում մահկանացու կյանքի ընթացքում: Հարության շնորհիվ մենք գիտենք, որ այդ մահկանացու տկարությունները ժամանակավոր են: (Դալլին Հ. Օուքս, «Մեծ ծրագիրը», *Լիահոնա*, մայիս 2020 թ., 94–95):

Պատրաստվեք բացատրելու հետևյալ հարցերի պատասխանները.

- Ի՞նչ է հարությունը: Ո՞վ է հարություն առնելու:
- Ըստ Ալմա 40.2–3 հատվածի՝ ի՞նչն է հնարավոր դարձնում Հարությունը:
- Հարության մասին մեր գիտելիքն ինչպե՞ս կարող է օրհնել մեզ մեր մահկանացու կյանքում:

Ուսուցանելիս անպայման հստակեցրեք, որ Հիսուս Քրիստոսի հարության շնորհիվ մենք նույնպես հարություն ենք առնելու: Նշեք մեկ պատճառ, որով երախտապարտ եք հարության խոստման համար:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD60013873_201_321-teacher_handout-2